# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# ՀՐԱՄԱՆ

« 16 » հունվարի 2025թ. N 14 -Ա

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2021 թվականի նոյեմբերի 05-ի թիվ 151-Լ հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության 11.1 կետի 5-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ու «ԷՍԷՍԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 17 սեպտեմբերի 2024 թվականին կնքված պետության կարիքների համար «ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՕԴ-24/2-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի 8.11 կետի պահանջներով՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) 2024 թվականի կարիքների համար «ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՕԴ-24/2» ծածկագրով (օդորակիչների ձեռքբերում) ընթացակարգի հաղթող ճանաչված «ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ–ին պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. Հաստատել ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվող տեղեկությունները՝ համաձայն կից հավելվածի:
3. Սույն հրամանը սահմանված ժամկետում ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն և մասնակցին:

Недействительная подпись

X

ԿԱՐԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Подписано: MARGARYAN KAREN 2410820077

**Կ. Մարգարյան**

**Հավելված 1**

ՀՀ ՔԿ գլխավոր քարտուղարի

«16» հունվարի 2025թ.

Թիվ **16-Ա** հրամանի

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցությանն դադարեցմանը | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| «ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ | 03576331 | Կոտայքի մարզ, Վ. Պտղնի 1 փ. 58 | - | Պայմանագրով սահմանված ժամկետում չի մատակարարել գնման առարկա հանդիսացող թվով 25 հատ օդորակիչներ, որի հիման վրա միակողմանի լուծվել է ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՕԴ-24/2-1 ծածկագրով պայմանագիրը | - | 16.01.2025թ.<br><br>ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՕԴ-24/2 |